ՀԱՅԿ ԽԵՄՉՅԱՆ

ՀՀ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԱՆԴԱՄ

1949թ. ստեղծված Եվրոպայի Խորհուրդը դարձավ երկրորդ համաշխարհայինից առաջ եւ երկրորդ համաշխարհայինի ժամանակ բազմաթիվ մտածողների եւ քաղաքական գործիչների նպատակների իրագործման մարմնացումը: Կառույցի հիմնական նպատակն է մարդու իրավունքների եւ ժողովրդավարական արժեքների տարածումն ու խորացումը ամբողջ եվրոպական աշխարհամասում:

Հայաստանի նորանկախ Հանրապետությունն իր անկախացումից անմիջապես հետո մեծ ուշադրություն սկսեց դարձնել եվրոպական այս կառույցին եւս: Սկզհայտորեն այդ ճանապարհը հեշտ չէր եւ Եվրոպայի Խորհուրդն էլ, ինչպես Եվրոպական Համայնքներն ու եվրոպական պետությունները դեռեւս կասկածամտորեն էր վերաբերվում ինչպես Հայաստանին, այնպես էլ ամբողջ հետխորհրդային տարածքին:

1992թ. սեպտեմբերի 10-11-ը Ստամբուլում կայացած արտահերթ նիստի ժամանակ Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեն հայտարարեց, որ "մերձեցումը կախված է ոչ միայն շոշափելի ժողովրդավարական առաջընթացից, այլեւ կոնֆլիկտային իրադրությունները խաղաղ ճանապարհով կարգավորելու պարտավորությունից":

Արդեն 1993-ին երեք կովկասյան պետությունների Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի խորհրդարանները հայտ էին ներկայացրել՝ ստանալու հատուկ հրավիրյալի կարգավիճակ Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովում: Այդ առթիվ ԵԽԽՎ-ն իր՝ 1993թ. թիվ 1220 հանձնարարականով կոչ էր անում վերջ տալ զինված հակամարտություններին, եւ, համագործակցելով ՄԱԿ-ի եւ ԵԱՀԽ-ի հետ՝ գտնել խաղաղ լուծումներ[1]:

Եվրոպայի Խորհրդի ընդլայնման վերաբերյալ 1994թ. հոկտեմբերի 4-ին Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովն ընդունեց 1247 հանձնարարականը Եվրոպայի Խորհրդի ընդլայնման վերաբերյալ: Ի թիվս այլ եվրոպական պետությունների, որոնք կարող էին միանալ Եվրոպայի Խորհրդին, հանձնարարականում նշվում էր, որ Հայաստանը, Վրաստանը եւ Ադրբեջանը մշակութային կապեր ունեն Եվրոպայի հետ եւ անդամակցության համար հայտ ներկայացնելու դեպքում կհամարվեն Եվրոպայի մաս[2]:

---

[1] Տես PACE recommendation 1220 (1993), p. 1

[2] Տես PACE recommendation 1247 (1994), p. 2

Հետագա բանաձեւերում ակնհայտ է ԵԽԽՎ-ի կողմնակալ վերաբերմունքն ադրբեջանական կողմի նկատմամբ: Մասնավորապես, թիվ 1059 (1995) բանաձեւում նշվում էր ներքին տեղահանված անձանց մասին, որոնց վիճակը հատկապես վատ է Ադրբեջանում[3]: Էլ ավելի կոշտ դիրքորոշում է ԵԽԽՎ-ն ցուցաբերում իր՝ թիվ 1119 (1997) բանաձեւում, որտեղ, վկայակոչելով Հելսինկիի եզրափակիչ ակտը, կատարում է միակողմանի եզրահանգումներ, նշելով, որ սահմանները պետք է չխախտվեն, ինչպես նաեւ այն, որ Լեռնային Ղարաբաղը պետք է ստանա լայն ինքնավարություն[4]:

1995թ. փետրվարի 3-ին Խորհրդարանական Ասամբլեայի Բյուրոն որոշեց վերսկսել հատուկ հրավիրյալ կարգավիճակի վերաբերյալ Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի դիմումների քննարկման գործընթացը:

Հայաստանի Խորհրդարանի հրավերով ԵԽ-ի Խորհրդանական Ասամբլեայի պատվիրակությունը ժամանեց Հայաստան՝ հետեւելու հուլիսի 5-ի ընտրությունների ընթացքը: Ընտրությունների վերաբերյալ իր զեկույցի եզրակացություններում զեկուցող Գելդերբլում-Լանկհաուտը նշեց. "Հայաստանը ջանքեր է գործադրում Եվրոպային ինտեգրվելու ուղղությամբ: Եվրոպայի Խորհուրդը հնարավոր ամեն ինչ պետք է անի այդ նպատակի իրականացման համար":

Հատուկ հրավիրյալ կարգավիճակ ստանալու գործընթացի շրջանակներում 1995թ. նոյեմբերի 7-11-ը Հայաստան այցելեց ԵԽ Խորհրդարանական Վեհաժողովի պատվիրակությունը: Այցելության արդյունքների մասին իր զեկույցում Գելդերբլում Լանկհուտը նշեց. "պատվիրակությունը համոզվեց ժողովրդավարությունը եւ շուկայական տնտեսությունը ամրապնդելու համար իշխանությունների վերցրած պարտավորվածություններում" եւ առաջարկեց Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովում Հայաստանին շնորհել հատուկ հրավիրյալի կարգավիճակ: Այդ զեկույցը միաձայն ընդունվեց 1996թ. հունվարի 12-ին՝ Եվրոպական ոչ անդամ երկրների հետ հարաբերությունների հանձնաժողովի կողմից, իսկ 1996թ. հունվարի 23-ին քաղաքական հարցերով հանձնաժողովը տվեց իր դրական կարծիքը:

1996թ. հունվարի 26-ին Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի Բյուրոն ՀՀ Խորհրդարանին շնորհեց հատուկ հրավիրյալի կարգավիճակ: Այսպիսով, Հարավային Կովկասում առաջինը Հայաստանն էր, ով հաղթահարեց Եվրոպայի Խորհրդին անդամակցելու առաջին քայլը: Այդ որոշումն արժանին է հատուցում մարդու իրավունքների եւ ազատությունների վրա հիմնված, ժողովրդավարական հասարակությանն ուղղված Հայաստանի ջանքերին:

---

[3] Տես PACE recommendation 1059 (1995), p. 1
[4] Տես PACE recommendation 1119 (1997), p. 1

Իսկ մինչ այդ, 1993թ. հունվարին Հայաստանին առաջարկվեց միանալ Եվրոպայի Խորհրդի Բնական եւ տեխնոլոգիական աղետների ռիսկից խուսափելու եւ կանխարգելելու բաց համաձայնագրին[5]: Սակայն միայն 1995թ. մարտի 21-ին ԵԽ նախարարների պատվիրակները Գլխավոր քարտուղարությանը թույլատրեցին Անդրկովկասի երկրների կառավարություններից յուրաքանչյուրի հետ համագործակցության ծրագրեր մշակելու նպատակով վերսկսել քաղաքական երկխոսությունը:

1995թ. սեպտեմբերին ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Վարդան Օսկանյանը մասնակցեց ԵԽ-ի Իրավունքի միջոցով ժողովրդավարության "Վենետիկի հանձնաժողովի" նիստին, իսկ արդեն նույն տարվա հոկտեմբերի Հայաստանը դարձավ այդ հանձնաժողովի ասոցիացված անդամ[6]:

1996թ. փետրվարի 7-ի նիստում Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեն որոշում ընդունեց Հայաստանի եւ Եվրոպայի Խորհրդի միջեւ քաղաքական երկխոսություն սկսելու մասին: Այդ կապակցությամբ մարտի 7-ին Եվրոպայի Խորհրդի Գլխավոր Քարտուղարի հրավերով Ստրասբուրգ մեկնեց Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Վահան Փափազյանը մասնակցելու Նախարարների Կոմիտեի պատվիրակների նիստին[7]:

Այցելության ընթացքում նախարար Փափազյանը հանդիպեց ԵԽ-ի Գլխավոր քարտուղար Դանիել Տարշիսի, Գլխավոր քարտուղարի տեղակալ Լյուպրեխտի, Մարդու իրավունքների եվրոպական հանձնաժողովի նախագահ Թրեքսելի, Խորհրդարանական Վեհաժողովի աշխատակազմի ղեկավար Հալլերի, քաղաքական, իրավական հարցերի, տնտեսական ու սոցիալական հարցերի, մարդու իրավունքների, կրթության, մշակույթի եւ սպորտի հարցերի վարչությունների տնօրենների հետ[8]:

Նախարար Վահան Փափազյանի կողմից բարձրացված հարցերից առաջիններից մեկը վերաբերվում էր Հայաստանի՝ ԵԽ-ին անդամակցելուն: Այդ գործընթացը կարող էր տեւել մեկից երկու տարի դիմումը ներկայացնելու պահից, որից հետո եւս մեկ տարի կարող էր պահանջվել Մարդու իրավունքների կոնվենցիան վավերացնելու համար: Այդ ընթացքում հնարավոր կլիներ Հայաստանի օրենսդրությունը համապատասխանեցնել ԵԽ-ի պահանջներին, մասնավորապես Կոնվենցիային: Որպես անդամակցության պայմաններ նշվում էին հետեւյալները՝ արդյոք տվյալ պետությունն իրեն համարում է եվրոպական, պատրաստ է կատարելու ԵԽ կանոնադրության մեջ նշված պարտականությունները ու ակտիվորեն համագործակցելու Եվրոպայի Խորհրդի նպատակ-

---

[5] Տես ՀՀ ԱԳՆ դիվանագիտական արխիվ, թղթապանակ N191, էջ 52
[6] Տես նույն տեղում
[7] Տես ՀՀ ԱԳՆ դիվանագիտական արխիվ, թղթապանակ N191, էջ 70
[8] Տես նույն տեղում

ների իրականացման համար, ապահովում է արդյոք մարդու իրավունքները եւ հիմնական ազատությունները, հարգում է օրենքի գերակայությունը, պատրաստ է ստորագրելու Մարդու իրավունքների Եվրոպական Կոնվենցիան եւ պարտավորվում է արդյոք այն ժամանակին վավերացնելու նվազագույն վերապահումներով, կարող է համարվել արդյոք իրական ժողովրդավար պետություն, մասնավորապես անցկացրել է ազատ եւ արդար ընտրություններ գաղտնի քվեարկությամբ, որի արդյունքում ձեւավորվել է տարբեր կուսակցություններ ներկայացնող խորհրդարան եւ պարտավորվում է կանոնավոր կազմակերպել նման ընտրություններ: Այս կետերի կատարումը պետք է պարզեին Վեհաժողովի քաղաքական, իրավական եւ ոչ անդամ երկրների հետ հարաբերությունների հանձնաժողովները: Բացի այդ քաղաքական հարցերի հանձնաժողովը պետք է զեկույց պատրաստեր Հայաստանի վերաբերյալ, որից հետո պետք է որոշվեր անդամակցության հարցը քվեարկության դնելը[9]:

Ինչ վերաբերվում է Հարավային Կովկասի մյուս պետություններին, ապա Հայաստանին հատուկ հրավիրյալի կարգավիճակ շնորհելուց հետո Ադրբեջանում սկսեց նկատվել զգալի ակտիվություն: Գրեթե անմիջապես Ստրասբուրգ մեկնեց ԱԳ նախարար Հասան Հասանովը: Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա այդ երկիրն առանձնահատուկ հետաքրքրություն սկզբնական շրջանում չէր ցուցաբերում ԵՄ-ին անդամակցելու հարցում, ինչը տարակուսանք էր առաջացնում ԵՄ ղեկավարության շրջանում, որը վրացական կողմին խորհուրդ էր տալիս ավելի մեծ ակտիվություն ցուցաբերել[10]: Սկզբնական շրջանում ԵՄ որոշ պատասխանատուներ կարծիք էին հայտնում, որ անդամակցության հարցը կարող է ձգձգվել, եթե ԼՂ-ի հակամարտության կարգավորման բանակցություններում տեղի չունենա դրական տեղաշարժ: Նշվում էր, որ ԼՂ հիմնախնդիրը չէր ներկայացվում որպես անդամակցության համար պարտադիր պայման, սակայն անդամ-երկրները կարող են օգտագործել հակամարտության հարցը Հայաստանի վրա ճնշում գործադրելու համար ստիպելու վերջինիս ավելի մեծ ջանքեր գործադրել հակամարտության քաղաքական կարգավորմանը հասնելու համար[11]:

ԵՄ-ի հիմնական մտահոգություններից մեկը վերաբերվում էր Հայաստանի ԱԷԿ-ի վերագործարկմանը: ԵՄ-ի Գլխավոր քարտուղար Դանիել Տարշիսի հետ հանդիպման ժամանակ ԱԳ նախարար Վահան Փափազյանը նշեց, որ անվտանգության հարցում Հայաստանն առաջինն է շահագրգռված եւ պատ-

---

[9] Տես ՀՀ ԱԳՆ դիվանագիտական արխիվ, թղթապանակ N191, էջ 78-79
[10] Տես ՀՀ ԱԳՆ դիվանագիտական արխիվ, թղթապանակ N191, էջ 71
[11] Տես ՀՀ ԱԳՆ դիվանագիտական արխիվ, թղթապանակ N191, էջ 77

ռաստ է համագործակցելու միջազգային փորձագետների հետ: Զրույցի ընթացքում որոշվեց համագործակցություն սկսել այդ ընագավառում[12]:

Հանդիպումների ընթացքում նախարարին տեղեկացվեց, որ ԵԽ-ն ուշադիր հետեւելու է Հայաստանում տեղի ունեցող իրավական վերափոխումներին տեսնելու, թե որտեղ է անհրաժեշտ օգնություն ցուցաբերել: Նշվեց նաեւ, որ ցանկալի կլիներ, որպեսզի ԵԽ-ի իրավաբան փորձագետներին ընդունելուց առաջ դիմորդ երկիրը նախապատրաստի օրինագծերի փաթեթ, նախաձեռնություններ եւ առաջարկներ, որոնց հիման վրա կարելի կլինի աշխատանք ծավալել[13]: Հանդիպումների ընթացքում քննարկվեցին նաեւ մշակութային, կրթական եւ սոցիալական հարցեր: Նշվեց նաեւ, որ Հայաստանի Ազգային ժողովի պատվիրակությունը կհրավիրվի մասնակցելու Վեհաժողովի ապրիլյան նիստին: Պատվիրակության անդամները ընդգրկվեցին Վեհաժողովի հանձնաժողովներում եւ ծավալեցին բավականին ակտիվ գործունեություն[14]: Նախարար Փափազյանի այցից շատ չանցած Հայաստանը ներկայացրեց դիմումը ԵԽ Նախարարների կոմիտեին:

1996թ. մարտին ԵՄ-ում ՀՀ ներկայացուցչության փոխղեկավարը հեռախոսային խոսակցություն ունեցավ ԵԽ-ում Ֆրանսիայի փոխներկայացուցչի հետ: Նա նշեց, որ որոշ անդամ երկրներ ցանկանում են, որպեսզի ԵԽ-ի Նախարարների պատվիրակները հրաժարվեն Հայաստանի թեկնածությունը ներկայացնել Խորհրդարանական Վեհաժողովում[15]: Հեռախոսային խոսակցության ընթացքում անուններ չեն տրվել, սակայն ակնհայտ էր, որ այդ անդամ երկրներից մեկը Թուրքիան է, որի համար անընդունելի էր Հայաստանի անդամակցությունը ԵԽ-ին առանց Ադրբեջանի:

Չնայած դրան արդեն 1996թ. մայիսի 15-ին ԵԽ Նախարարների Կոմիտեն որոշում կայացրեց փոխանցել Հայաստանի դիմումը Խորհրդարանական Վեհաժողովին[16]: Այդ պահին քննարկվում էր անդամակցության հարցի քննարկման երկու հնարավոր տարբերակ տարածաշրջանային եւ անհատական: Նշվում էր, որ եթե Վեհաժողովում հատուկ կարգավիճակ տրամադրելու դեպքում ԵԽ-ն որդեգրեց անհատական մոտեցում, ապա անդամակցության հարցում հակվածություն կար դեպի տարածաշրջանային տարբերակը[17]:

Նշվում էր անդամակցությանն առնչվող երեք կարեւոր քաղաքական հարց: Դրանք էին.

---

[12] Տես ՀՀ ԱԳՆ դիվանագիտական արխիվ, թղթապանակ N191, էջ 71
[13] Տես ՀՀ ԱԳՆ դիվանագիտական արխիվ, թղթապանակ N191, էջ 73
[14] Տես ՀՀ ԱԳՆ դիվանագիտական արխիվ, թղթապանակ N191, էջ 75
[15] Տես ՀՀ ԱԳՆ դիվանագիտական արխիվ, թղթապանակ N191, էջ 88
[16] Տես Council of Europe, Committee of Ministers, Resolution (96)21 on Armenia, adopted on 15 May 1996
[17] Տես ՀՀ ԱԳՆ դիվանագիտական արխիվ, թղթապանակ N191, էջ 190-192

- ԼՂ հիմնահարցը
- ՀՅՂ գործունեության կասեցումը
- Լրատվական միջոցների ազատությունը

ԵՄ պաշտոնյաների կողմից նշվում էր նաեւ Հայաստանի որոշակի պասիվության մասին՝ ի հակադրություն Ադրբեջանի ծավալած ակտիվ գործունեության: Իհարկե անհրաժեշտ է նշել, որ Ադրբեջանը լայնորեն օգտվում էր Թուրքիայի աջակցությունից[18]:

1996թ. մայիսի 21-ին Սալոնիկում ԵՄ-ի Խորհրդարանական Վեհաժողովի Բյուրոն առաջարկեց Հայաստանի՝ ԵՄ-ին անդամակցության կարգավիճակի մասին խնդրանքը նորից ուղարկել քաղաքական Հանձնաժողովին՝ զեկույցի համար եւ իրավական Հանձնաժողովին ու ոչ անդամ պետությունների հետ հարաբերությունների Հանձնաժողովին՝ կարծիք ստանալու համար: Մայիսի 29-ին Խորհրդարանական Վեհաժողովի մշտական Հանձնաժողովը հաստատեց այդ որոշումը[19]:

1999թ. սեպտեմբերի 21-24-ը ԵՄ Խորհրդարանական Վեհաժողովի 32-րդ նստաշրջանին Եվրոպայի Խորհրդի Գլխավոր քարտուղար ընտրված ավստրիացի Վալտեր Շվիմերը հայտարարեց, որ Հայաստանը պետք է դառնա Եվրոպայի Խորհրդի անդամ: Այդ մասին տեղեկացրել էր Ավստրիայի փոխվարչապետ, արտաքին գործերի նախարար Վոլֆգանգ Շյուսելը՝ հուլիսի 7-ին Հայաստան կատարած իր այցելության ժամանակ[20]:

Ի վերջո 2000թ. հունիսի 28-ին՝ իր 21-րդ նստաշրջանի ընթացքում ԵԽԽՎ-ն ընդունեց թիվ 221 կարծիքը Հայաստանի՝ ԵՄ անդամ դառնալու վերաբերյալ[21]: Համաձայն այդ կարծիքի, Հայաստանը պետք է կատարեր հետեւյալ քայլերը ԵՄ անդամ դառնալուն պես.

Կոնվենցիաների ստորագրում եւ վավերացում.

Ա. Անդամակցություն ստանալու պահին ստորագրել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ) եւ նրան լրացնող թիվ 2 եւ թիվ 11 արձանագրությունները, ինչպես նաեւ թիվ 1, 4, 6 եւ 7 արձանագրությունները. *Ինչպես ցույց տվեց հետագան, այս կետը կատարվեց լիովին, եւ Հայաստանը վերոնշյալ կոնվենցիան եւ արձանագրությունները ստորագրեց հունվարի 25-ին:*

Բ. Վավերացնել ՄԻԵԿ-ը եւ նրան լրացնող թիվ 1, 4, 6 եւ 7 արձանագրությունները անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում:

---

[18] Տես նույն տեղում
[19] Տես ՀՀ ԱԳՆ դիվանագիտական արխիվ, թղթապանակ N191, էջ 174
[20] Տես ՀՀ ԱԳՆ դիվանագիտական արխիվ, թղթապանակ N191, էջ 213
[21] Տես PACE Opinion No. 221 (2000), 28 June 2000

Արդյունքում ՄԻԵԿ-ը եւ արձանագրությունները վավերացվեցին փոքր-ինչ ուշացումով: Բուն ՄԻԵԿ-ը եւ 1, 4 եւ 7 արձանագրությունները վավերացվեցին 2002թ. մարտի 20-ին[22], իսկ մահապատժի վերացման վերաբերյալ թիվ 6 արձանագրությունը՝ 2003թ. սեպտեմբերի 9-ին[23]: Այստեղ սակայն, որոշ հեղինակներ մեղադրում են, որ Հայաստանը ժամանակին չի կատարել իր պարտականությունները՝ հենց մահապատժի կիրառումն արգելելու մասին՝ թիվ 6 արձանագրության վերաբերյալ[24]: Այդ մասին 2002թ. սեպտեմբերի 26-ին եղավ անգամ ԵԽԽՎ 31-րդ նստաշրջանին ընդունված 1304 (2002) բանաձեւը, որում նշվում էր. "ԵԽ-ն չի կարող ընդունել այն, որ Հայաստանը չի վավերացրել թիվ 6 արձանագրությունն անդամակցությունից հետո մեկ տարվա ընթացքում"[25]:

Գ. Ստորագրել եւ վավերացնել Խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոնվենցիան եւ դրա արձանագրություններն անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում.

Այստեղ կոնվենցիան ստորագրվեց արդեն 2001թ. մայիսի 11-ին, իսկ դրա երկու արձանագրությունները՝ 2002թ. հունվարի 29-ին: Կոնվենցիան վավերացվեց 2001թ. նոյեմբերի 7-ին[26], իսկ արձանագրությունները՝ 2002թ. մայիսի 15-ին[27][28].

Դ. Ստորագրել եւ վավերացնել Տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում.

---

[22] Տես որոշում Ն-264-2, ՀՀ ԱԺ որոշումը "Մարդու իրավունքների եվ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին" կոնվենցիան, դրան կից 1952 թվականի մարտի 20-ին Փարիզ քաղաքում ստորագրված արձանագրությունը, 1963 թվականի սեպտեմբերի 16-ին Ստրասբուրգ քաղաքում ստորագրված թիվ 4 արձանագրությունը եւ 1984 թվականի նոյեմբերի 22-ին Ստրասբուրգ քաղաքում ստորագրված թիվ 7 արձանագրությունը վավերացնելու մասին, 20 մարտի 2002թ., Երեւան

[23] Տես որոշում Ն-011-3, ՀՀ ԱԺ որոշումը "Մարդու իրավունքների եվ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին" կոնվենցիայի՝ մահապատժի վերացման վերաբերյալ թիվ 6 արձանագրությունը վավերացնելու մասին, 9 սեպտեմբերի 2003թ., Երեւան

[24] Տես Roger G. Hood, The Death penalty: Beyond abolition, p. 104. Council of Europe, Strasbourg 2004

[25] Տես PACE resolution 1304 (2002), 26 September 2002

[26] Տես որոշում Ն-216-2, ՀՀ ԱԺ որոշումը Խոշտանգումների եվ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիան վավերացնելու մասին, 7 նոյեմբերի 2001թ., Երեւան

[27] Տես որոշում Ն-280-2, ՀՀ ԱԺ որոշումը Խոշտանգումների եվ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրությունը վավերացնելու մասին, 15 մայիսի 2002թ., Երեւան

[28] Տես որոշում Ն-281-2, ՀՀ ԱԺ որոշումը Խոշտանգումների եւ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 2 արձանագրությունը վավերացնելու մասին, 15 մայիսի 2002թ., Երեւան

խարտիան ստորագրվեց 2001թ. մայիսի 11-ին եւ վավերացվեց 2001թ. դեկտեմբերի 28-ին[29]:

Ե. Ստորագրել եւ վավերացնել Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում. *Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան ստորագրվեց 2001թ. մայիսի 11-ին եւ վավերացվեց 2001թ. դեկտեմբերի 4-ին*[30]:

Զ. Ստորագրել եւ վավերացնել անդամակցություն ձեռք բերելուց հետո երկու տարվա ընթացքում Տարածքային համայնքների կամ իշխանության մարմինների միջեւ անդրսահմանային համագործակցության եվրոպական շրջանակային կոնվենցիան եւ դրա լրացուցիչ արձանագրությունները, ինչպես նաեւ հանձնման, քրեական հարցերում փոխադարձ օժանդակության, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, որոնման, զավթման եւ բռնագրավման եւ դատապարտյալների փոխանցման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի կոնվենցիաները՝ միաժամանակ կիրառելով դրանցում առկա հիմնարար սկզբունքները.

Տարածքային համայնքների կամ իշխանությունների միջեւ անդրսահմանային համագործակցության մասին եվրոպական շրջանակային կոնվենցիան, ինչպես նաեւ վերջինիս առաջին եւ երկրորդ արձանագրությունները Հայաստանը ստորագրել է 2002թ. ապրիլի 3-ին: Կոնվենցիայի երրորդ արձանագրությունը Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրվել է միայն 2010թ. մարտի 18-ին: Ինչպես կոնվենցիան[31], *այնպես էլ վերջինիս առաջին*[32] *եւ երկրորդ*[33] *արձանագրությունները վավերացվել են 2003թ. սեպտեմբերի 23-ին: Հանձնման, քրեական հարցերում փոխադարձ օժանդակության, հանցագործ գործունեությունից ստացված եկամուտների լվացման, որոնման, զավթման եւ բռնագրավման եւ դատապարտյալների փոխանցման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի կոնվենցիաները Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է 2001թ. մայիսի*

---

[29] Տես որոշում Ն-247-2, ՀՀ ԱԺ որոշումը Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան վավերացնելու մասին, 28 դեկտեմբերի 2001թ., Երեւան

[30] Տես որոշում Ն-236-2, ՀՀ ԱԺ որոշումը Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան վավերացնելու մասին, 4 դեկտեմբերի 2001թ., Երեւան

[31] Տես որոշում Ն-026-3, ՀՀ ԱԺ որոշումը "Տարածքային համայնքների կամ իշխանությունների անդրսահմանային համագործակցության մասին" եվրոպական շրջանակային կոնվենցիան վավերացնելու մասին, 23 սեպտեմբերի 2003թ., Երեւան

[32] Տես որոշում Ն-025-3, ՀՀ ԱԺ որոշումը "Տարածքային համայնքների կամ իշխանությունների անդրսահմանային համագործակցության մասին" եվրոպական շրջանակային կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը վավերացնելու մասին, 23 սեպտեմբերի 2003թ., Երեւան

[33] Տես որոշում Ն-027-3, ՀՀ ԱԺ որոշումը "Տարածքային համայնքների կամ իշխանությունների անդրսահմանային համագործակցության մասին" եվրոպական շրջանակային

11-ին: Հանձնման[34] եւ քրեական հարցերում փոխադարձ օժանդակության մասին[35] կոնվենցիաները վավերացվել են 2001թ. նոյեմբերի 21-ին, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, որոնման, զավթման եւ բռնագանձման մասին կոնվենցիան 2003թ. հոկտեմբերի 8-ին[36], իսկ դատապարտյալների փոխանցման վերաբերյալ մասին կոնվենցիան արդեն 2001թ. մարտի 21-ին[37]:

է. ստորագրել Եվրոպական սոցիալական խարտիան անդամակցությունն ձեռք բերելուց հետո երկու տարվա ընթացքում եւ վավերացնել այն անդամակցություն ձեռք բերելուց հետո երեք տարվա ընթացքում՝ ջանալով կիրառել խարտիայի սկզբունքներին համապատասխան քաղաքականություն:
Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան Հայաստանը ստորագրեց 2001թ. հոկտեմբերի 18-ին եւ վավերացրեց 2003թ. դեկտեմբերի 25-ին[38]:

Ը. ստորագրել Եվրոպայի խորհրդի արտոնությունների եւ անձեռնմխելիությունների մասին գլխավոր համաձայնագիրը եւ համապատասխան արձանագրություններն անդամակցություն ձեռք բերելու պահին եւ վավերացնել դրանք անդամակցություն ձեռք բերելուց հետո մեկ տարվա ընթացքում:
Եվրոպայի խորհրդի արտոնությունների եւ անձեռնմխելիությունների մասին գլխավոր համաձայնագիրը եւ նրա լրացուցիչ արձանագրությունը վավերացվեցին 2001թ. մայիսի 14-ին[39], իսկ թիվ 6 արձանագրությունը՝ 2002թ. մայիսի 15-ին[40]:

Ներկայացվող պահանջները վերաբերվում էին նաեւ արցախյան հիմնախնդրի արագ կարգավորմանը, ինչպես նաեւ ներպետական օրենսդրությանը:

կոնվենցիային կից. Միջտարածքային համագործակցության մասին՝ թիվ 2 արձանագրությունը վավերացնելու մասին, 23 սեպտեմբերի 2003թ., Երեւան

[34] Տես որոշում Ն-228-2, ՀՀ Աժ որոշումը հանձնման մասին կոնվենցիան (վերապահումներով եվ հայտարարություններով) վավերացնելու մասին, 21 նոյեմբերի 2001թ., Երեւան

[35] Տես որոշում Ն-229-2, ՀՀ Աժ որոշումը քրեական գործերով փոխադարձ օգնության մասին եվրոպական կոնվենցիան (վերապահումներով եվ հայտարարություններով) վավերացնելու մասին, 21 նոյեմբերի 2001թ., Երեւան

[36] Տես որոշում Ն-036-3, ՀՀ Աժ որոշումը "Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման եւ բռնագրավման մասին" կոնվենցիան (կից հայտարարություններով) վավերացնելու մասին, 8 հոկտեմբերի 2003թ., Երեւան

[37] Տես որոշում Ն-161-2, ՀՀ Աժ որոշումը "Դատապարտյալների փոխանցման մասին" կոնվենցիան վավերացնելու մասին, 21 մարտի 2001թ., Երեւան

[38] Տես որոշում Ն-064-3, ՀՀ Աժ որոշումը Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան (կից հայտարարությամբ) վավերացնելու մասին, 23 դեկտեմբերի 2003թ., Երեւան

[39] Տես որոշում Ն-179-2, ՀՀ Աժ որոշումը "Եվրոպայի Խորհրդի արտոնությունների եվ անձեռնմխելիությունների մասին" գլխավոր համաձայնագիրը եվ դրա վերաբերյալ լրացուցիչ արձանագրությունը վավերացնելու մասին, 14 մայիսի 2001թ., Երեւան

[40] Տես որոշում Ն-282-2, ՀՀ Աժ որոշումը Եվրոպայի Խորհրդի արտոնությունների եվ անձեռնմխելիությունների մասին գլխավոր համաձայնագրի վեցերորդ արձանագրությունը վավերացնելու մասին, 15 մայիսի 2002թ., Երեւան

Վերջինիս հետ կապված մասնավորապես նշվում էր քրեական օրենսգրքի հատուկ մասի ընդունման անհրաժեշտությունը՝ մահապատժի վերացման եւ արվամոլության ապաքրեականացման հետ կապված, օմբուդսմենի մասին օրենքի ընդունումը, լրատվամիջոցների, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների եւ մի շարք այլ նոր օրենքներ ընդունելու վերաբերյալ, ինչն էլ իրականացվեց Հայաստանի կողմից:

2000թ. վերջին արդեն ակնհայտ էր, որ Հայաստանը շուտով կդառնա Եվրոպայի Խորհրդի լիիրավ անդամ: Այդ առթիվ հատկանշական է 2000թ. նոյեմբերի 3-4-ը Հռոմում կայացած Մարդու Իրավունքների հարցով Եվրոպական նախարարական համաժողովը՝ նվիրված Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի հիսունամյակին, որին հրավիրված էր նաեւ Հայաստանի ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը: Իր ելույթում նախարար Օսկանյանը նշեց, որ ուրախ է գտնվել այդտեղ նախքան անդամության հաստատվելը նոյեմբերի 9-ին նախարարների խորհրդում, ինչպես նաեւ շեշտեց այն փաստը, որ նախորդ ինը տարիների ընթացքում Հայաստանը դարձել է ամբողջովին այլ երկիր, եւ Եվրոպայի Խորհուրդն իր ներդրումն ունի հասարակության մեջ փոփոխությունների կայացման գործում[41]:

Ի վերջո, 2000թ. նոյեմբերի 9-ին Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեն իր 107-րդ նստաշրջանի ընթացքում ընդունեց Res(2000)13 բանաձեւը, որով հրավիրում էր Հայաստանին դառնալ Եվրոպայի Խորհրդի անդամ: Այդ բանաձեւով ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակների թիվը սահմանվեց չորս եւ Հայաստանը պետք է ստանձներ որոշակի ոչ շատ մեծ ֆինանսական պարտավորություններ[42]: Այսպիսով, 2001թ. հունվարի 25-ին Հայաստանը դարձավ Եվրոպայի Խորհրդի լիիրավ անդամ:

Դառնալով Եվրոպայի Խորհրդի անդամ Հայաստանը Հանրապետությունը ստանձնեց որոշակի պարտավորություններ եւ բնական է, որ Եվրոպայի Խորհուրդը պետք է վերահսկեր Հայաստանի ուղին այդ պարտավորությունների կատարման վերաբերյալ: Այդ կապակցությամբ ընդունվել են մի շարք բանաձեւեր ԵԽԽՎ-ում: Այդ բանաձեւերում մի քանի անգամ նշվում էր սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ հանրաքվեի անցկացման անհրաժեշտության մասին: Որպես հանրաքվեի անցկացման վերջնաժամկետ նշվում էր 2005թ. հունիսը: Այդ կապակցությամբ 2005թ. հունիսին ընդունվեց թիվ 1458 (2005) բանաձեւը, որում որպես սահմանադրական հանրաքվեի

---

[41] Տես Proceedings, European Ministerial Conference on Human Rigths and Commemorative Ceremony of the 50th anniversary of the European Convention on Human Rights, p. 127, Strasbourg 2002

[42] Տես Council of Europe, Committee of Ministers, Resolution Res(2000)13, Invitation to Armenia to become a member of the Council of Europe

անցկացման վերջնաժամկետ նշվում էր 2005թ. նոյեմբերը, ինչպես նաեւ կոչ էր արվում ամբողջովին կիրառել Վենետիկի հանձնաժողովի խորհուրդները[43]:

2005թ. նոյեմբերի 27-ին Հայաստանում անցկացվեց սահմանադրական հանրաքվե: 2005թ. դեկտեմբերին մոնիտորինգի հանձնաժողովն ընդունեց հայտարարություն, որում ողջունեց հանրաքվեի դրական արդյունքը, բայց միեւնույն ժամանակ որոշակի կասկածներ հայտնեց հանրաքվեի ընթացքում տեղի ունեցած խախտումների վերաբերյալ, նշելով, որ հնարավոր է քվորումը բավականաչափ չի եղել[44]:

Այսօր եւս Եվրոպայի Խորհուրդը եւ նրա Խորհրդարանական Վեհաժողովը շարունակում են նպաստել Հայաստանում մարդու իրավունքների եւ ժողովրդավարական արժեքների ամրապնդմանը: 2008թ. նախագահական ընտրությունների արդյունքում եւս ԵԽԽՎ-ն որոշակի բանաձեւեր հրապարակեց Հայաստանի Հանրապետության վերաբերյալ, որոնք սակայն անկասկած առանձին ուսումնասիրության կարիք ունեն:

Այսպիսով տեսնում ենք, որ Եվրոպայի Խորհրդին անդամակցությունը միայն դրական ազդեցություն կարող էր ունենալ Հայաստանի նորանկախ հանրապետության վրա, ինչն էլ գիտակցվում էր Հայաստանի իշխանությունների կողմից: Այնուամենայնիվ առաջին փուլում ամեն ինչը չէր որ հարթ էր ընթանում անդամակցության հարցում եւ Եվրոպացիները հերթական անգամ ցուցաբերում էին զգուշավորություն եւ համբերատարություն նախկին խորհրդային պետությունների հարցում:

Սակայն Հայաստանի ԵԽ-ին անդամակցությունն ուղեկցվեց որոշակի պայմանների առաջադրմամբ: Հայաստանին ներկայացվեց բավականին մեծ բարեփոխումների ցանկ, որոնք պետք է կատարվեին անդամակցությունից հետո որոշակի կարճ ժամանակի ընթացքում: Ի պատիվ հայկական իշխանությունների պետք է նշել, որ ներկայացված կետերի գերակշիռ մասը կատարվեց ճիշտ ժամանակին կամ աննշան ուշացումներով եւ Հայաստանն ապացուցեց, որ կարող է համարվել եվրոպական ընտանիքի մի մաս:

Այնուամենայնիվ անդամակցությունից հետո եւս շարունակվեց ԵԽ ուշադրությունը Հայաստանին: Իր բանաձեւերի միջոցով ԵԽԽՎ-ն հետեւում էր Հայաստանում մարդու իրավունքների եւ ժողովրդավարության իրավիճակին եւ անհրաժեշտ խորհուրդներ էր տալիս: Իհարկե շատ հաճախ այդ խորհուրդները պահանջում էին ավելին քան պետք է, սակայն դրանց արդյունքը եղան բազմաթիվ բարեփոխումները, ինչպես նաեւ սահմանադրական փոփոխությունների ընդունումը:

---

[43] Տես PACE Resolution 1458 (2005), 23 June 2005.
[44] Տես PACE Doc. 10778, 22 December 2005